ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՈՒՏԻԶՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

ք. Երևան «10» ապրիլի 2025 թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Տիգրան Սիմոնյանի (այսուհետ՝ Կողմ 1), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Աուտիզմ ազգային հիմնադրամը, ի դեմս տնօրեն Լիլիթ Աթաջանյանի, (այսուհետ՝ Կողմ 2), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են համագործակցել Հուշագրի 3-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.2 Կողմերի առաքելությունն է ապահովել աուտիզմ և զարգացման այլ խնդիրներ ունեցող անձանց հիմնախնդիրների մասին ինստիտուտի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի իրազեկվածությունը, իրականացնել համատեղ միջոցառումներ՝ ի նպաստ ներառական կրթության զարգացման:

3. ՆՊԱՏԱԿԸ և ՇՐՋԱՆԱԿԸ

3.1. Սույն Հուշագրի շրջանակներում համագործակցության ցանկացած խնդիր/նախագիծ պետք է բացահայտվ/իրականացվի Կողմերի միջև քննարկման և փոխադարձ համաձայնության միջոցով: Սույն Հուշագիրը որևէ պարտավորություն կամ ակնկալիք չի ստեղծում Կողմերի համար՝ այլ ծրագրերում աշխատանք կատարելու կամ դրանցում մասնակցելու առումով: Յուրաքանչյուր Կողմ կարող է (իր հայեցողությամբ) ընտրել կամ մերժել մասնակցել մյուս Կողմի առաջարկած ցանկացած նախագծինո: Եթե Կողմերը համատեղ կազմակերպում են որևէ

նախագիծ, ապա պետք է նախապես համաձայնեցնեն ծրագրին իրենց ներգրավվածության բոլոր պայմանները:

3.2. Կողմերը համագործակցում են համատեղ կրթական ծրագերի իրականացման ուղղություններով:

3.3. Ինստիտուտի ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն է տրվում իրազեկման այցեր կատարել «Իմ ուղին» ուսումնավերականգնողական սոցիալ-հաբիլիտացիոն կենտրոն:

3"4" Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող շահառուներին մասնագիտական կողմնորոշման նպատակով հնարավորություն է ընձեռվում ճանաչողական այցեր կատարել ինստիտուտ:

3"5" Կազմակերպել համատեղ միջոցառումներ:

3"6" Համագործակցել առողջապահական, կրթական և գիտական ոլորտներում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն Հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

4.2. Համագործակցության շրջանակում Կողմերը կարող են տեղեկատվություն և հրապարակումներ փոխանակել արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման ձևերի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

5. ՈՉ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն Հուշագիրը նախատեսված չէ Կողմերի միջև բացառիկ հարաբերություններ ստեղծելու համար, և յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի ազատորեն համագործակցել երրորդ կողմի հետ:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

6.1. Կողմերը պետք է պահպանեն գաղտնիություն սույն Հուշագրի բովանդակությանը և Կողմերից որևէ մեկի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկության վերաբերյալ, որը հայտնի է դարձել մյուս Կողմին: Կողմերը չպետք է օգտագործեն իրենց հայտնի դարձած որևէ տեղեկություն այլ նպատակի համար, քան սույն Հուշագրով նախատեսված նպատակ է:

6.2. Կողմերին թույլատրվում է հրապարակել սույն Հուշագրի ստորագրումը իրենց պաշտոնական կայքերում և սոցիալական մեդիայի ալիքներում:

7. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ

7.2. Սույն Հուշագրում կատարված փոփոխություններն ամրագրվում են Հուշագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներում:

8. ՀՈՒՇԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:

8.2 Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

9" ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1	Կողմ 2
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Աուտիզմի ազգային հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ, ք. Գյուրջյան 13
Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	Տնօրեն՝ Լիլիթ Աթաջանյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.